



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

«Պատմական հուշարձանների և կուլտուրական մյուս արժեքների պահպանության նկատմամբ հոգատարությունը Հայկական ՍՍՀ ֆաղաֆացիների պարտքը ու պարտականությունն է:» (ՀՍՍՀ սանմանադրություն, հոդված 66)



Մեծ եկեղեցու հյուսիսային շքամուտքը

Քորայրի վանքը զարգացած միջնադարի Հայկական ճարտարապետության աչքի ընկնող հուշարձանախմբերից է, որի պատմությունը սերտորեն կապվում է հայկական միջնադարյան նշանավոր ավատական տների՝ Բագրատունիների հարստության Կյուրիկյան ճյուղի և Զաքարյան տոհմի վրացադավան ներկայացուցիչների (Շահնշահ, Գիորգի, Մխար-զրըծն և ուրիշներ) գործունեության հետ: Այն հանդիսացել է Հայաստանի կարևոր գրչօջախներից և մշակութային կենտրոններից մեկը:

Անվան ծագումը կապվում է այլ (վրաց. Քոր) բառի հետ:

XIII դ. կեսերին Քորայրը Կյուրիկյաններից արդեն անցել էր Զաքարյաններին՝ միաբնակ հաստատությունից վերածվելով թաղկեղոնականի (վրացադավան): Գրանոսվ է պայմանավորված հուշարձանների մի մասի վրա վրացերեն արձանագրու-

թյունների, վրացական ոճին հատուկ եզրեր ունեցող հարդարների տարրերի առկայությունը:

Վանքը տեղադրված է Անդրերկաթուղու Քորեր կայարանի (Թումանյանի շրջան) հարավարևմտյան մասում՝ Գերեղի ձորալանջի բարձրադիր դարավանդների վրա: Շրջակա զեղանկար բնության հետ հուշարձանների ներդաշնակ զուգակցումը վանքի համալնապատկերը դարձնում է բացառիկ տպավորիչ:

Հուշարձանների հիմնական խումբը բաղկացած է երեք եկեղեցուց, զանգակատուն-տապանատնից, սեղանատնից, մատուռներից, խաչքարերից, պարսպապատերի մնացորդներից: Տարածքը եզերող ժայռերում կան դժվար մատչելի այրեր և պատսպարաններ, որոնցից աչքի է ընկնում «Սղնախ» (պատստարան) կոչվածը:



Մեծ եկեղեցու խորանը



Մեծ եկեղեցու մնացորդները հառավ-
արևմուտքից

Մեծ եկեղեցին (XII դ. վերջ) երկայ-
նական ձգված միանավ դահլիճ է՝ կիսա-
վեր վիճակում. պահպանվել են խորանը՝
գմբեթարդի կես բարձրությամբ, հյուսիս-
ային և արևմտյան պատերը, հարավա-
յինի ստորին երկու շարքը: Մածկված է
եղել կամարներով ուժեղացված կիսա-
գլանաձև թաղով: Ունի հարուստ եզրա-
կալներով երկու մուտք՝ հյուսիսային և
արևմտյան կողմերից: Խորանը լուսավոր-
վում է երկու շարքում տեղադրված հինգ
հյուսվածքազարդերով պատած զոգավոր
բարձր քիվերով: Արևելյան ճակատում
աչքի են ընկնում պատուհանների ճար-
տարապետական տարրերով, զարդաքան-
դակներով և վարդյակներով համարված
շքեղ պարակալները, բարձրության մեծ
մասը բռնող հյուսակեն խալը, վերասլաց
ճակտոնը: Պատերն արտաբուստ սրբա-
տաշ բազալտից են, ներքուստ եղել են



Մատուռ— ավանդատան շխմուտի
դրվագ

ավաղված և որմնակարներով պատած:
Վերջիններիս մնացորդները՝ կատարված
բարձր արվեստով և նրբագեղությամբ,
պահպանվել են խորանի վրա և բեմի
հյուսիսային պատին (ամրացվել են
1971 թ.): Խորանի որմնակարները կազ-
մում են երեք շարք, որոնցից վերինում
(գմբեթարդի վրա) պատկերված է Աստ-
վածամայրը (Օղիգիտրիա) հրեշտակա-
պետերի հետ, միջինում՝ Հաղորդության
տեսարանն է (Եվխարիստիա), ստորի-
նում՝ սրբերի ֆիգուրներ են: Եարջերն
իրարից բաժանված են զարդագոտիներով:
Բեմի պատերին ներկայացված են եղել
մարգարեների ֆիգուրներ, որոնցից հա-
մեմատարար լավ վիճակում հյուսիսային
պատի վրա պահպանվել է Եղիայի ֆի-
գուրը:

Եկեղեցուն հյուսիսային կողմից հետա-
գայում կցվել է քառակուսուն մուտ հա-
տակագծով մատուռ-ավանդատունը՝ ծած-

կրված փոքր-ինչ սլաքաձևությու ունե-
ցող թաղով: Մուտքը արևմտյան կողմից
է, պատած նրբահյուս պարակալով: Հա-
րավային պատում ունի գլխավոր եկեղե-
ցու՝ բեմի հետ կապող բացվածք: Մատուռ-
ավանդատունը ևս ներքուստ եղել է սը-
վաղված և որմնակարներով պատած:
Վերջիններս ունեցել են հորինվածքային
նույն եռաշարք սիսեման, ինչ որ մեծ
եկեղեցուն: Տարբերությունը կայանում է
նրանում, որ այստեղ վերին շարքում
Աստվածամոր փոխարեն պատկերված է
Բարեխոսության տեսարանը (Դեիսուս):
Եկեղեցուն հյուսիսային կողմից, հա-
վանաբար մատուռ-ավանդատան հետ
միաժամանակ, կցվել է սրահ, որից պահ-
պանվել են որմնակամարները, երեք ան-
կյունների որմնամույթները և հյուսիսա-
յին կողմի միջանկյալ սյուներից երկու-

սի խարխուր: Սրահը հյուսիսից ունեցել
է կամարային երեք բացվածք, իսկ արև-
մուտքից՝ մեկ: Կիսագլանաձև թաղը ան-
կյունային մասերում հատված է եղել ա-
վելի փոքր կորուսյան թաղերով:

Մեծ եկեղեցու արևելյան կողմում, ժայ-
ռի եզրին կիսավեր վիճակում գտնվում
է միանավ թաղածածկ դահլիճի տիպի
Մարիամաշեն եկեղեցին: Մուտքը արև-
մուտքից է՝ եզերված կիսաշրջանագծա-
յին պսակով, որի հորիզոնական թևերը
նստում են հնաոճ, միմյանցից տարբեր
պարզ տրամատ ունեցող պահուսակների
վրա: Մուտքի բարավորի արձանագրու-
թյան համաձայն եկեղեցին կառուցվել է
կյուրիկե թ թաղավորի դուստր Մարիա-
մի կողմից՝ 1171 թ.: Եկեղեցու հարավա-
յին պատին հետագայում կցվել է մա-
տուռ:



Սրահավոր եկեղեցու սրահը արևելքից



Ջանգալատուն— տապանատունը ճարավից

Ջանգալատուն-տապանատունը գտնվում է մեծ եկեղեցու հյուսիսային մասում՝ ավելի բարձր տեղադրությամբ: Քառակուսի հատակագծով դահլիճ է, որն արևելյան կողմում ավարտվում է ողջ լայնությամբ բունող խորանով: Մուտքը հարավից է՝ եզերված եռաշարք շքաբարե պարսկալով: Մածկը կիսազլանածև թաղ է, ուժեղացված լայնական պատերից դուրս կառուցված պահուստակներին հենվող թաղակամարներով: Շինությունը պահված է եղել ութսուտանի զանգաշտարակով, որից մնացել են հիմքի ձևավոր քարերով շարքը և սյուների խարխուսներից երեքը: Ըստ հարավային պատի վրացիներն արձանագրության՝ կառուցվել է Շահնշահ ամիրպասալարի որդի

Մխարզրձեղի և նրա կին Վաննեի կողմից՝ 1279 թ.:

Սեղանատունը (XIII դ.) գտնվում է մեծ եկեղեցու հյուսիսարևմտյան բարձրադիր մասում՝ զանգալատուն-տապանատնից ոչ հեռու: Ուղղանկյուն դահլիճ է՝ 13,5×8,5մ չափերով: Պահպանվել են միայն պատերը՝ կիսազլանածև թաղի ստորին շարքի քարերով: Թաղը ուժեղացված է եղել որմնամույթներից բարձրացող կամարներով: Որմնամույթները երկայնական ուղղությամբ ևս իրար հետ կապված են որմնակամարներով: Արևմտյան պատի հարավային որմնակամարից բացվում է ուղղանկյուն խորշ՝ 2 մ խորությամբ: Սեղանատան մուտքը հյուսիսային կողմից է՝ առանց հարդարանքի:



Ջանգալատուն—տապանատան շքամուտքը

Պարսպի զլխավոր մուտքը





Մարիամաշեն եկեղեցու մուտքը

Շախկյան Գառնիկ Սմբատի

ՔՈՐԱՅՐ

Հիմնական խմբից դեպի հյուսիս գրտնրվում է միանավ թաղակապ օրանավոր եկեղեցի (XIII դ.): Արևելյան կողմում երկայնական առանցքից դեպի հարավ շեղված ունի խոր կիսաշրջանագծային խորան, որին հյուսիսից կից է կիսազանաձև թաղով ծածկված ավանդատունը: Միակ մուտքը հարավից է՝ բարավորի մասում եղբրված երկշերտ շթաքարե պայտածն գոտիով: Սրահը բռնում է հարավային ճակատի միջին մասը և արևելյան ու հարավային կողմերից ունի կամարային զույգ բացվածքներ:

Վանքը շրջապատված է եղել պարսպով, որի մնացորդները 4—5 մ բարձրությամբ պահպանվել են տարածքի հյուսիսային և հյուսիսարևելյան մասերում: Գլխավոր մուտքը սրահավոր կամարակապ բացվածք է՝ կիսազանաձև աշտարակներով:

© ՀՍՍՀ պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության ընկերություն

Մասն. խմբագիր՝ Վ. Մ. Հառուրյունյան, խմբագիր՝ Ս. Վ. Ստեփանյան

Նկարիչ՝ Ս. Ս. Մկրտչյան

Տեխն. խմբագիր՝ Ա. Գ. Ասրյան

Վերստուգող սրբագրիչ՝ Գ. Հ. Ղազարյան

Հանձնված է շարվածքի 21.07.1986 թ.:

Ստորագրված է տպագրության

14.07.1987 թ.։ Ֆորմատ՝ 84×108¹/₃₂։

Թուղթ՝ «Կապճապատ», տպագր. 0,42

պայմ. մամ., հրատ.՝ 0,4 մամ.։ Պատվեր

775։ Տպաքանակ 10000։ Գինը 15 կոպ.։

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 2 տպարանի մասնաճյուղ, Երևան, Մարշալ Բաղրամյանի պող. № 26։